

## ԱՄՆ-Ի ԲՈՆԱԿԱԼ ՈՒԺԵՐԸ ՀԱՍԻՉԵԻ ՄԵԼԻՔԻԷ ԳԻՂԻ ԻՐԵՆՅ՝ ԿԵԴՐՈՆԸ ԿԸ ՀԱՍՅՆԵՆ 40 ԶԻՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Սուրիոյ ճեզիրեի շրջանին մէջ խարխիսներ հաստատած ամերիկեան բռնակալ ուժեր կրկին կը խախտեն միջազգային օրէնքները եւ Ուալիտ ապօրինի միջանցքէն 40 զինատար մեքենայ կը դրկեն Յասիջէ նահանգի ՄԷլիքիԷ գիւղի իրենց կեդրոնը:



Վերջին ամիսներուն ամերիկեան բռնակալ ուժեր, ապօրինի միջանցքներէ զինատար հագարաւոր մեքենաներ ուղղած էին Յասիջէ՝ ամրագրելու իրենց ներկայութիւնը սուրիական ճեզիրեի շրջանին մէջ եւ գործակցելով շրջանի զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հետ թալանելու Սուրիոյ քահիւղն ու հանքային այլ հարստութիւնները:

## ԱՆԽԱՐՉԻ ՇՈՒՉ ԴՍԱԿԱՉԵԻ ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ Կ'ԱՆՅՆԻ 7 ՄԻԼԻՈՆԸ

Ամերիկեան «Ուորլտ Միթըր» կայքին համաձայն, աշխարհի տարածքին պատկածեւ ժահրով մահացածներուն թիւը անցած է 408.000-ը, վարակուածներունը՝ 7.200.000-ը, իսկ բուժուածներուն թիւը ներկայ տուեալներով հասած է 3.538.086-ի: Այս առումով Ռուսիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը 9 Յունիսին յայտարարած է, որ նախորդ 24 ժամուան ընթացքին երկրին մէջ արձանագրուած է 5.958 նոր վարակուած պարագայ եւ 171 մահ: Դսակածեւ ժահրին դէմ պայքարի Ռուսիոյ գրասենեակը յայտարարած է, որ երկրին մէջ վարակուածներուն ընդհանուր թիւն է 485.253, իսկ մահացածներունը՝ 6.142:



Փաքիստանի Առողջապահութեան Նախարարութիւնը յայտնած է, որ նոյն ժամանակահատուածին, երկրին մէջ արձանագրուած են 2.170 նոր վարակուածներ, 301 մահուան պարագաներ, իսկ Աֆղանիստանի Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարած է 542 նոր վարակուածներու եւ 15 մահուան պարագաներու մասին:

Չինաստանի մէջ արձանագրուած է 3 նոր վարակուածներու պարագայ, իսկ Թայվանի մէջ երկու նոր պարագայ: Ինչ կը վերաբերի արաբական աշխարհին, Եմենի մէջ պատկածեւ ժահրին դէմ պայքարի ազգային յանձնախումբը յայտարարած է, որ արձանագրուած է 21 նոր վարակուած պարագայ, այսպիսով վարակուածներուն ընդհանուր թիւը հասած է 694-ի: Իսկ Սուտանի մէջ 161 նոր վարակուած եւ 31 մահացած պարագաներ արձանագրուած են:

## ՍՈՒՐԻԱԿԱՆ ԼԻՐԱՅԻ ԱՆՆԱՆԱԴԷՊ ԱՆԿՈՒՄ

Վերջերս, սուրիական լիրան թաւալզլոր անկում սկսաւ արձանագրել: Երկուշաբթի, 8 Յունիսին սուրիական լիրային սակը ամ. տոլարին դիմաց հասաւ 3200 ս.ո.՝ի:

RT լրատուակայանին համաձայն, մինչ պետական սակը 700 ս.ո. էր մէկ ամ. տոլարին դիմաց, սեւ շուկային մէջ սակը, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, հասաւ 3200-ի սահմանը:

Սուրիոյ Կեդրոնական դրամատան միջամտութենէն ետք, լիրային փոխանակման գինը թէեւ նուազեցաւ, սակայն կրկին մնաց անհամեմատելի նախորդ ժամանակահատուածներուն հետ:



Տնտեսագետներ կը յայտնեն, որ սուրիական լիրային անկումն ու անոր հետեւանքով արձանագրուող սղաճը տնտեսական ծանր կացութեան կրնան մատնել ժողովուրդը:

Աւելցնենք, որ Սուրիոյ կեդրոնական դրամատունը անցեալ շաբաթ հանդէս եկած էր հաղորդագրութեամբ մը, ուր յայտնած էր, որ խստագոյն պատիժներ պիտի սահմանէ բոլոր այն անձներուն, հաստատութիւններուն, թէ ընկերութիւններուն նկատմամբ, որոնք կը շահագործեն սուրիական լիրան. աւելցնելով, որ դրամատունը ամէն ջանք ի գործ պիտի դնէ վերականգնելու լիրայի փոխանակման արժեքը:

## ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՃԵՖՐԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓԱՍՏԷ, ՈՐ ԱՄՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ՍՈՒՐԻԱՅԻՆԵՐՈՒ ՏԱՌԱՂԱՆԵԻՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ Է»

Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութենէն պաշտօնական աղբիւր մը սուրիական ՍԱՆԱ լրատու գործակալութեան յայտնեց, որ Ճեյմս Ճեֆրիի յայտարարութիւնը Սուրիոյ տնտեսական իրավիճակին մասին անվիճելի խոստովանութիւն կը նկատուի սուրիացիներուն կրած տառապանքներուն գծով ԱՄՆ վարչակարգի պատասխանատուութեան, շեշտելով, որ ամերիկեան այս քաղաքականութիւնը պարտութեան պիտի մատնուի սուրիացիներուն հաստատակամութեան եւ ազգային գիտակցութեան շնորհիւ:



Աղբիւրը հաստատեց, որ այս պատժամիջոցները Սուրիոյ դէմ շղթայագերծուած պատերազմին մէկ այլ երեսը կը կազմեն եւ գանձը սաստկացնելու որոշումը անուած է Սուրիոյ դէմ մղուած ահաբեկչական պատերազմին ճախողութեան լոյսին տակ:

Աղբիւրը եզրափակելով ըսաւ. «Ճեֆրիի յայտարարութիւնը անգամ մը եւս կը հաստատէ, որ ԱՄՆ վարչակարգը տարածաշրջանը կը դիտէ իսրայելեան շահերէն մեկնելով, իսկ նշուած յայտարարութեամբ ներկայացուած պահանջները իսրայելեան պահանջներ են, որոնք կը միտին Իսրայելի օրինականութիւնը հաստատել: Եթէ միջազգային օրակարգն ու արաբական երկիրներու գործակցութիւնը բնականոն ձեւով ընթանային, նման առաջադրանքներու դէմ յանդիման պիտի չգտնուէին»:

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ԵՆԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՐՏԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՈՂ ՄՆՊԱՄԹԵՐՔՆԵՐՈՒՆ ՍԱԿԱԳԻՆԵՐԸ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԴԻՏԻ ԶԿՐԵՆ»

Սուրիոյ Ներքին գործոց Նախարարութիւնը շեշտեց, որ Սուրիոյ քաղաքացիներուն ելեկտրոնային քարտերով տրամադրուող մընդամթերքներուն սակագինները փոփոխութիւն պիտի չկրեն: Այս քարտերը կառավարութեան որոշումով յատկացուած են քաղաքացիներուն, զիրենք գերծ պահելու վաճառականներու շահագործումներէն, ինչպէս նաեւ Սուրիոյ պարտադրուած միակողմանի պատիժներուն ազդեցութենէն:



## ՈՍԿԻՆ ԳԻՆԸ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՆՈՒԱԶՈՒՄ ԱՐՉԱՆԱԳՐԵՅ



Երկուշաբթի, 8 Յունիս 2020-ին, Սուրիոյ մէջ, ոսկիին գինը, ամիսներու բարձրացումէն ետք, արտակարգ նուազում արձանագրեց: 24 կերատ, մէկ կրամ ոսկիին գինը մէկ օր առաջ 105.000 ս.ո. էր, Երկուշաբթի օր նուազեցաւ եւ հասաւ 80.000 ս.ո.՝ի:

**Խմբագրական**

### ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՅՐԿԻՉՈՒԻՆ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԾԵՉԻՐԷԻ ԲԵՐՐԻ ԱՐՏԵՐԸ

Սուրիոյ ճեզգիրի շրջանը երկրի ամենէն բերրի շրջանը կը համարուի: Այդ շրջանը պատմութեան ընթացքին անուանուած է Սուրիոյ սննդակողովը, որովհետեւ հարուստ եղած է յատկապէս հացահատիկներու ընտանիքին պատկանող արմտիքներու՝ ցորենի եւ գարիի բերրի դաշտերով, կենդանական աշխարհով եւ քարիւղով:

Սուրիական ճեզգիրէն կ'ընդգրկէ Սուրիոյ հիւսիսային եւ հիւսիսարեւելեան շրջանները՝ առաւելաբար Յասիէի, Ռաքքայի եւ Տեր Չօրի նահանգները: Անոր տարածութիւնը Սուրիոյ ընդհանուր տարածութեան մէկ երրորդն է, հիւսիսէն ան սահմանակից է Թուրքիոյ, արեւելքէն՝ Իրաքի, արեւմուտքէն կը կապուի Սուրիոյ Յալէպ նահանգին, իսկ հարաւարեւմուտքէն՝ Յամա եւ Յոմս նահանգներուն:

Նախքան պատերազմը, ճեզգիրի շրջանը տարեկան 1000 թոնի հասնող քանակութեամբ ցորեն ու գարի կ'արտադրէր, ու թէեւ պատերազմի տարիներուն նուազած էր արտադրութիւնը, սակայն 2018-ի աւարտին, պատերազմի համեմատական մեղմացումով, ցորենի եւ գարիի արտերու մշակումը աստիճանաբար բարելաւուիլ սկսած էր: Թրքական ուժերու թափանցումով, սակայն, թիրախ դարձան շրջանի բերրի դաշտերը, մէկէ անելի անգամներ հրկիզուեցան ցորենի ու գարիի արտերու հազարաւոր հեկտարներ, որոնք շրջանի գիւղացիներուն եկամուտի հիմնական աղբիւրը կը համարուէին: Տեղական աղբիւրներ կը հաստատեն, որ վերջին 1,5 տարուան ընթացքին անելի քան 100.000 հեկտար մշակուած արտ հրկիզուած ու ածխացած է շրջան ներխուժած թրքական եւ ամերիկեան ուժերու ծրագրաւորումով եւ իրականացումով:

Շրջանի գիւղացիները բողոքի իրենց ցոյցերով ձայն բարձրացուցին, պոռթկացին ու պահանջեցին երկրէն վանել օտար ուժերը, որոնք կը փորձեն այս անգամ տնտեսական ճնշում բանեցնել իրենց վրայ, պարտադրել տեղւոյն բնակչութիւնը, որ գործակցին օտար ուժերու հետ, եւ վերջապէս Սուրիոյ դէմ տնտեսական ճնշումներու օղակ մը եւս հաստատել, ոչ միայն անկումի ենթարկելու Սուրիոյ տնտեսութիւնը, այլեւ երկիրը աստիճանաբար դուրս բերելու իր ինքնաբաւ տնտեսութեան պաշտպանութեանն եւ աղքատութեան, սովի մատնելու երկրի բնիկ ժողովուրդը: Ծեզգիրի բերրի արտերուն հրկիզումը, քարիւղին շահագործումն ու ջուրի պաշարներու չարաշահումը՝ շրջանի եւ ողջ Սուրիոյ բնակչութեան այս անգամ ոչ թէ զենքով, այլ տնտեսական ճնշումներով սպառնալու ամենէն դաժան միջոցներն են, որոնք պատերազմական ոճի կը համարուին, համաձայն 1998-ին Յոմսի մէջ վաւերացուած միջազգային քրեական դատարանի կանոնադրութեան ութերորդ յօդուածին, որ կիրարկուիլ սկսած էր 2002-էն ի վեր: Յօդուածին համաձայն, պատերազմներու ընթացքին գոյքի ոչնչացումը եւ բռնագրաւումը, զինուորական բախումներու հետ անմիջական կապ չունեցող տարածքներու վրայ, կը համարուին պատերազմական յանցագործութիւններ:

Սուրիոյ պետութիւնը, բազում ճակատներու վրայ պայքար մղելով մէկտեղ, ամեն ջանք ի գործ կը դնէ միջազգային ատենաներու դիմաց բացայայտելու այս ոճիը, միեւնոյն ատեն պահպանելու երկրին ինքնաբաւ տնտեսութիւնը, սննդական ապահովութեանը, հակառակ երկրին վրայ բանեցուած զինուորական եւ տնտեսական աննախադէպ ճնշումներուն:

Ծեզգիրի բերրի արտերուն հրկիզման պատասխանատուները այդ շրջանի տարածքները բռնագրաւող օտար ուժերն են, որոնք պատասխանատուութեան պէտք է հրաւիրուին Սուրիոյ ժողովուրդին դէմ ի գործ դրուած անմարդկային իրենց վերաբերմունքին, այլեւ պատերազմական յանցագործութեան համար:

«Գ.»

-Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ անհրաժեշտ է յարգել պսակածեւ ժահրի կանխարգիլման միջոցներու կիրարկումը, յատկապէս արտերկրէն եկած 21 վարակուածներու պարագան նկատի ունենալով, դիտել տալով որ, թէեւ Սուրիոյ մէջ վարակուածներուն թիւը մեծ չէ, սակայն անտարբերութիւնն ու անպատասխանատուութիւնը կրնան բարդացնել վիճակը եւ դուռ բանալ համաճարակի տարածման: Սա կառավարութիւնը պիտի մղէ վերստին խիստ միջոցներ կիրարկելու երկրէն ներս:



-Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտնեց, որ աւարտած է 2020 ուսումնական տարեշրջանի պաքալորիայի եւ պրովէի պետական քննութեանց նախապատրաստական աշխատանքները, յարգելով պսակածեւ ժահրէն նախագուշանալու բոլոր պայմանները:



Նախարարութիւնը յայտնեց նաեւ, որ քննութեանց արձանագրուող աշակերտութեան ընդի. թիւն է 557.348 աշակերտ-աշակերտուհիներ, որոնցմէ 301.145-ը պրովէի, իսկ 210.027-ը պաքալորիայի քննութիւններ պիտի յանձնեն: Քննութիւններուն յատկացուած են 4901 կեդրոններ, Սուրիոյ բոլոր նահանգներուն մէջ:

- Յալէպի պետական համալսարանի տնօրէնութիւնը Ատամնաբուժական համալսարանի դեկան Նշանակեց տոքթ. Էլիզապէթ Սարգիսը:



Էլիզապէթ Սարգիս ծնած է Յալէպ, 1970-ին, աւարտած է Դամասկոսի ատամնաբուժական համալսարանը, ապա Նոյն համալսարանէն ստացած է իր դոկտորականը:

Կը դասաւանդէ Յալէպի Ատամնաբուժական համալսարանի եւ անոր մագիստրոսականի բաժիններուն մէջ: Նախապէս կը զբաղեցնէր Ատամնաբուժական համալսարանի գիտական հարցերու փոխդեկանի պաշտօնը:

Յեղինակ է գիտական բազում յօդուածներու, թարգմանութիւններու եւ հետազօտութիւններու, որոնք հրատարակուած են տեղական, արաբական եւ միջազգային մամուլին մէջ:

Իր դոկտորականի պատրաստութեան շրջանին գործակցած է Լոնտոնի Էսթման համալսարանին հետ: Գործուղուած է Թուրքիոյ Ֆրանսա, Ատամնաբուժական համալսարանը:

2018-ին մասնակցած է Սոչիի միջսուրիական բանակցութիւններու խորհրդածոյղովին:

-Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը Երեքշաբթի, 9 Յունիսին յայտարարեց պսակածեւ ժահրով վարակուածներու երկու նոր պարագայ՝ Դամասկոսի մօտակայ Ռասուլ Մաարա աւանին մէջ: Այսպիսով՝ Սուրիոյ մէջ ընդհանուր վարակուածներուն թիւը եղաւ 146, որոնցմէ 62-ը բուժուած է, իսկ 6-ը՝ մահացած:

Մահացած	Բուժուած	Վարակուած
06	62	146

Յիշենք, որ 7 Յունիսին ի վեր Ռասուլ Մաարա աւանը ենթարկուած է մեկուսացման, որովհետեւ այնտեղ բացայայտուած էր պսակածեւ ժահրով վարակուած 12 պարագայ՝ Սուրիա-Յորդանան ճամբուն վրայ աշխատող վարորդի մը շրջան մուտք գործելէն եւ մարդոց հետ շփում ունենալէն ետք:

# Լուրեր Հայաշխարհին

## ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՀՅՂ ԱՐՅԱՆԻ ԿԿ-Ի ՀԱՍՏԱՑՆՈՒԹԵԱՄԲ

8 Յունիսին, Արցախի Հանրապետության (այսուհետև՝ ԱՀ) Նախագահ Արայիկ Յարությանն

եան մէջ կը բացակայի անոր ՀՀ անդամ ըլլալու հանգամանքը», աւելացուցած է Դաւիթ Իշխանեան:



ստորագրած է շարք մը հրամանագիրներ, որոնց համաձայն ՀՀ-ի անդամներ նշանակուած են շարք մը պաշտօններու վրայ: Մասնաւորապէս, ԱՀ Շահումեանի շրջանի վարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսեան հեռացուած է իր պաշտօնէն՝ նշանակուելով ԱՀ տնտեսական արտադրական ենթակառուցվածքի նախարարի տեղակալ, իսկ Ազատուհի Սիմոնեան նշանակուած է ԱՀ Նախագահի խորհրդակցական-Արցախի Հանրապետության Նախագահի յատուկ յանձնարարութիւններու գծով ներկայացուցիչ՝ Սփիւռքի հարցերով:

«Ապառաժ» ՀՀ Արցախի Կերտական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեանին հարցուց, թէ այս նշանակումները որքանով կը համապատասխանեն ԱՀ նոր կառավարութեան մաս չկազմելու ՀՀ Արցախի ԿԿ-ի յայտարարութեան:

Դաւիթ Իշխանեան վերահաստատելով, որ Դաշնակցութիւնը մաս չի կազմեր ձեւաւորուող կառավարութեան, դիտել տուած է, որ ընդդիմադիր ըլլալ չի նշանակեր, որ ՀՀ քաղաքները չեն կրնար իրենց նպաստը բերել պետութեան տարբեր ոլորտներու զարգացման: «Ինչպէս նախկին հարցազրոյցներուն մէջ նշած էի, Արցախի մէջ ընդդիմութիւն եւ իշխանութիւն ըլլալը ինքնանպատակ չի կրնար ըլլալ: Հիմնական հարցը երկրի զարգացման եւ բարգաւաճման նպատակն է: Այդ առումով հարց չենք տեսներ կարող կուսակցական ընկերներու տարբեր պաշտօններու վրայ պատասխանատուութիւն ստանձնելը: Պէտք է աւելացնեն, որ Գագիկ Մարտիրոսեան Կերտական Կոմիտէի համաձայնութեամբ նշանակուած է համապատասխան պաշտօնին վրայ: Սակայն նոյնը չեն կրնար ըսել Ազատուհի Սիմոնեանի պարագային: Ան Հայաստանի Հանրապետության ՀՀ կառուցի անդամ է, տուելով պաշտօնին անցնելու համար չէ ստացած ՀՀ Արցախի ԿԿ-ի համաձայնութիւնը, ուստի անոր հարցը պիտի քննարկուի կուսակցութեան մակարդակով: Չարմանայի է նաեւ, որ պաշտօննապէս իր պարտականութիւնը կենսագրութեամբ

Անդրադառնալով նախատեսելի այլ նշանակումներու հարցին, ՀՀ Արցախի ԿԿ-ի ներկայացուցիչը չի բացառեր այդ մէկը՝ շեշտելով, որ այդ նշանակումները տեղի կ'ունենան միայն ԿԿ-ի համաձայնութեամբ: «Տարբեր շրջաններու մեր կառուցներուն արդէն տեղեկացուած ենք, որ ԱՀ իշխանութիւններուն հետ յարաբերութիւնները պէտք է հաստատուին ՀՀ Արցախի ԿԿ-ի միջոցով եւ տեղեկութեամբ», ըսած է Դաւիթ Իշխանեան՝ ակնարկելով ԱՀ իշխանութիւններուն եւ ՀՀ համապատասխան կառուցի շրջանակներուն միջեւ յարաբերութիւններուն:

### Հայաստանի մէջ ՊԱՍԿԱՑՆԵԹ ՃԱՆՐՈՎ ՎԱՐՍԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԹԻՐԸ Հաստ 13.325-ի

8 Յունիսի դրութեամբ՝ Հայաստանի մէջ պատկածե ժահրով վարակուածներուն թիւը աւելցած է 195 նոր պարագաներով. մահացած են



11 անձեր: Այսպիսով, ժահրով վարակուածներուն ընդհանուր թիւը հասած է 13.325-ի, որոնց 4.099-ը ապաքինած է, իսկ մահացածներուն թիւը հասած է 211-ի:

Առողջապահութեան նախարարի խօսակ Ալինա Նիկողոսեան տեղեկացուց, որ Շաբաթ եւ Կիրակի օրերը, պատկածե ժահրի քննութիւն կատարող տարրալուծարանները չաշխատեցան, այդ պատճառով ալ արդիւնքները աւելի քիչ էին:

Հայաստանի առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան իր կարգին յայտնեց, որ ներկայիս բուժում ստացողներուն մէջ կան 403 անձեր, որոնց վիճակը բաւական ծանր է, իսկ 94 այլ վարակակիրներունը՝ շատ ծանր:

## ՅԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՐԱԿԻՆ ՍԿՍԵԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԿՐՆԱՅ ՄԱՍՆԱԿՅԻԼ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԹԵ՛ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ԵՒ ԹԵ ԹԵՄԵՐՈՒՆ ՄԵՋ

Արամ Ա. կաթողիկոս թեմերուն ուղղած իր շրջաբերական նամակով առաջնորդ սրբազաններուն եւ Ազգային իշխանութեանց թելադրեց, որ Կիրակի, 7 Յունիսին սկսեալ, եկեղեցիները պատրաստ պէտք է ըլլան ընդունելու հաւատացեալները եւ մասնակից դառնալու Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ ընդհանրապէս եկեղեցական արարողութիւններուն:



Արդարեւ, համաճարակին ստեղծած պայմաններուն պատճառով եւ ժողովուրդի գաւակները համաճարակի վտանգէն հեռու պահելու նախանձախնդրութեամբ մեկնելով, անցնող շուրջ երեք ամիսներուն ընթացքին եկեղեցական արարողութիւնները առցանց կերպով կատարուած էին: Այս օրերուն, նկատի ունենալով գաւազան երկիրներու մէջ պետական կառույցներուն կողմէ կատարուած թելադրութիւնները, յարմար կը նկատենք, որ եկեղեցիները սկսին ընդունիլ ժողովուրդի գաւակները: Թեմերուն ուղղուած վերոյիշեալ շրջաբերականին մէջ վեհափառ հայրապետը թելադրեց հետեւեալները.

- 1) Ծիսային եկեղեցիները հաւատացեալները ընդունին՝ միշտ նկատի ունենալով տեղական պայմանները եւ եկեղեցիներու ֆիզիքական կարելիութիւնը:
- 2) Հաւատացեալները պարտին միշտ դիմակ գործածել եկեղեցիին մէջ եւ պահել պահանջուած ֆիզիքական հեռաւորութիւնը:
- 3) «Ողջոյն» ժամանակ պատարագիչը Ս. խորանին եւ կամ ատենակի երիցագոյն հոգեւորականը ժողովուրդը կ'օրինէ «Ողջոյն» փոխանցելով. իսկ հաւատացեալները, իրենց կարգին, զիրար կ'ողջունեն՝ միշտ նոյն հեռաւորութիւնը պահելով:
- 4) Ս. հաղորդութիւն պիտի տրուի հաւատացեալներուն. սակայն, մինչ

Շար.՝ էջ 8 >

## ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ՊԵՏԵ Ե ԸԼԼԱՅ ՈՐՈՇԱԿԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԸ ՇՈՐԻՉ»



Երեքշաբթի, 9 Յունիս 2020-ին, ՀՀ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան ArmDaily.am-ին հետ զրոյցի ընթացքին, անդրադառնալով Բարգաւաճ Հայաստան Կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանի յայտարարութեան եւ համախմբում յառաջացնելու կոչին, ըսաւ. «Դաշնակցութիւնը բազմիցս իր գնահատականները տուած է երկրին մէջ ստեղծուած ներքաղաքական իրավիճակին մասին, ներկայացնելով համապատասխան առաջարկներ ու պահանջներ: Ընդամենը մէկ շաբաթ առաջ մենք յատուկ յայտարարութիւն հրապարակեցինք ներքաղաքական իրավիճակին մասին: Ծառուկեանին հետ այդ նիւթով քննարկում չենք կատարած»:

Պատասխանելով այն հարցումին, թէ կը մտածուի՞ համախմբման մասին, Սաղաթելեան յայտնեց. «Համախմբումը պէտք է ըլլայ որոշակի օրակարգի մը շուրջ, ստեղծուած իրավիճակէն դուրս գալու համար: Մենք այդ մասին բազմիցս յայտարարած ենք, պէտք է ըլլան յստակ օրակարգեր, իսկ այդ օրակարգերը պէտք է բխին ժողովուրդին ու պետութեան շահերէն: Այս պահուն այդպիսի որեւէ քննարկում չկայ: Մենք մեր առաջարկները արդէն մէկ տարի է ի վեր կը ներկայացնենք հրապարակաւ»:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչ օրակարգ կ'առաջարկէ Դաշնակցութիւնը համավարակի հետեւանքները յաղթահարելու եւ այս իրավիճակէն դուրս գալու համար, ՀՀ ԳՄ-ի ներկայացուցիչը ըսաւ. «Այդ օրակարգը նոր չենք առաջարկեր, մենք մեր առաջարկները տուած ենք 3 ամիս առաջ՝ կազմուած 48 կետերէ բաղկացած ծրագիրէ մը: Այս ժամանակահատուածին մեր բոլոր կարելիութիւններով, միջոցներով կը փորձենք օգտակար ըլլալ մեր քաղաքացիներուն: Իսկ քաղաքական օրակարգին գծով աւելցնենք, որ քանի մը օր առաջ մենք յայտարարած ենք, որ Ազգային ժողովը պէտք է յատուկ նիստ գումարէ եւ ամբողջական գնահատական տայ ստեղծուած իրավիճակին մասին, պատասխանատուութեան կանչէ ծախողած պաշտօնեաները եւ լքեր փնտռէ՝ ստեղծուած իրավիճակէն դուրս գալու համար»:














Աշակերտական Անկիւն

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾԱՆԱՊԱՐՅԱՆ

«Երաժշտությունը դրախտային կեանք է»: Այս նախադասությունը մանկությունես ի վեր յաճախ լսած էի, այնուամենայնիւ յատուկ նշանակություն մը չունէր ինձի համար մինչեւ այն օրը, երբ յանկարծ մէջս խայտաց տարօրինակ զգացում մը, բացատրություն խնդրեցի հօրմէս: Ան առաջարկեց, որ երաժշտական դասընթացքի հետեւիմ, մեր սիրելի Բեսայի Միսաքեան Մշակութային կեդրոնէն ներս: Թէեւ չէի համոզուած, բայց արձանագրուեցայ: Սկսայ հետեւիլ դաշնամուրի դասընթացքներուն, սակայն միշտ դժգոհանքի արտայայտություններով: Ծնողներս կը քաջալերէին, եւ կը փորձէին խանդավառել զիս:



Այսպէս երկու տարի օրինաւոր ձեւով հետեւեցայ դասերուն, մինչեւ 21 Մարտ 2014-ը՝ դաժան տեղահանումը: Բարեբախտաբար վերադարձանք մեր հրաշագեղ ծննդավայրը, բայց... ամէն կողմ աւեր էր, հրկիզուած էին եկեղեցիները, նաեւ Մշակութային կեդրոնը: Երբ տեսայ կեդրոնին շէնքը այդ խղճալի վիճակին մէջ, աներեւոյթ ուժ մը ցնցեց ողջ էութիւնս, ու այդ պահուն մէջս արթնացաւ բուն սեր մը երաժշտութեան հանդէպ: Փրկուած լուսանկարներս եւ տեսերիզներս դիտելէ ետք, ուզեցի անպայման շարունակել ընդհատուած երաժշտական դասընթացքներս, որովհետեւ զգացի շատ կարեւոր բանի մը բացակայութիւնը մէջս: Դաշնամուրը զիս կախարդած էր: Գիտակցեցայ կեանքիս մէջ երաժշտութեան անհրաժեշտութեան: Երեք տարի սպասեցի, բայց ափսոս, կեդրոնը չվերաբացուեցաւ: Դիմա արդէն երեք տարիէ շաբաթական դրութեամբ կը հետեւիմ դաշնամուրի դասերու, Լաթաքիա: Դաշնամուրը դարձաւ անբաժանելի ընկերս, որուն ընկերակցութեամբ կը մոռնամ ամէն մտահոգութիւն եւ դժուարութիւն:

Էւա Պետրոնիքեան  
Ը. կարգ  
Բեսայի Ազգ. Ուսում. Միացեալ Ծննդարան

«ԴՐՕՇԱԿ»Ը...  
Սկիզբ՝ էջ 5

2. «Դրօշակ»ի հիմնական նպատակն ու առաքելութիւնը սկիզբէն ի վեր եղած է ու կը մնայ հայ ժողովուրդին եւ դաշնակցական շարքերուն կուսակցութեան գաղափարական եւ սկզբունքային տեսական նիւթեր հայթայթել, որուն ճամբով կը փորձուի ընդհանրապէս բարձրացնել հայ ժողովուրդին քաղաքական գիտակցութեան մակարդակը: 3. ՀՀ Դաշնակցութեան ոչ պարբերական հրատարակություններու շարքը ծնունդ առած է յեղափոխական-ընկերվարական հրատարակություններու «Դրօշակ» մատենա-

շարով, որուն առաջին գրքոյկը՝ «Ապստամբական Ոգի», լոյս տեսած է 1894ին: Այնուհետեւ յաջորդաբար հրատարակուած են հարիւրաւոր գիրքեր, անոնց մէջ նաեւ՝ օտար լեզուով: 4. «Դրօշակ»ի մէջ լոյս տեսած ուսումնասիրություններէն շատերը հետագային հրատարակուած են առանձին հատորներով (ոչ «Դրօշակ» մատենաշարի անունով): 5. Իւրաքանչիւր ժամանակաշրջան մօտաւոր կերպով համապատասխանած է համաշխարհային, ազգային եւ կուսակցական տարաբնոյթ վերիվայրումներու եւ փոփոխություններու ժամանակաշրջաններուն: (Շարունակելի)

ԵՐԲ ՆԱԲԱՏԱՍ



Խորեն Քինյ. Պերթիզլեան

Երբ հաւատաս, թէ կեանքը նուրբ է աստուածային՝ կեանքի Տուհչին պիտի պարտիս մատուցել աղօթք երախտագիտական: Երբ հաւատաս, թէ ներկայութիւնդ պատահական չէ՝ սովորական կեանքդ պիտի վերածես յատուկ առաքելութեան: Երբ հաւատաս, թէ Տիրոջ քով անկարելի բան չկայ՝ հանելուկներու եւ հանգոյցներու ատեն պիտի չունենաս հարցման նշան: Երբ հաւատաս, թէ Աստուած անդրադարձի առիթ կու տայ՝ սխալը սրբագրելը պիտի նկատես վճռական: Երբ հաւատաս Սուրբ Գիրքին խօսքերուն սրբազան, պիտի ընդառաջես աստուածային կանչին փրկական: Երբ հաւատաս, թէ Յիսուս Ինքն է ճշմարիտ սիրական՝ պիտի վերապահես իրեն տեղ կեդրոնական: Երբ հաւատաս երազներու իրականացման՝ պիտի ձգտիս կերտել պայծառ ապագան: Երբ հաւատաս Տիրոջ դատաստանին՝ պիտի ընդունիս, թէ մարդիկ անդիմակ հոն պիտի ներկայանան:



Երբ հաւատաս Աստուծոյ ժամկետին ճշգրտութեան՝ պիտի հռչակես սքանչելիքը վերին իմաստութեան: Երբ հաւատաս Մկրտութեան խորհուրդին օրինաբար ներգործութեան՝ պիտի ապրիս Տիրոջ կամքին համապատասխան: Երբ հաւատաս եկեղեցւոյ ուղիղ դաւանանքին՝ պիտի սնանիս եկեղեցւոյ անխարդախ կաթն մայրական: Երբ հաւատաս պարզունակ հոգիով՝ օրերդ կ'ըլլան մանկապարտեզի նման: Երբ հաւատաս խորքով՝ երկնաւոր հայրդ պիտի պաշտես յաւիտեան: Երբ հաւատաս աստուածահաճոյ ընթացքով՝ պիտի դիզես հոգեշահ գանձեր, որնք յաւետ կը մնան: Երբ հաւատաս անբիծ վարքով՝ կեանքիդ ընդմէջէն պիտի տարածուի բուրմունքը կրօնասիրութեան: Երբ հաւատաս հաստատ քայլերով՝ պիտի փարատի հոգեմաշ վախը կորստական: Երբ հաւատաս հոգիի անմահութեան՝ մահկանացու մարմինին քայքայումը պիտի համարես բնական: Երբ հաւատաս երկնային լուսեղէն յարկերու գոյութեան՝ հողեղէն տունէն դուրս ելլելը պիտի սեպես սկիզբ փոխադրութեան: Երբ հաւատաս մեռելներու յարութեան՝ մահուան նկատմամբ պիտի չունենաս սուգ հոգեկործան: Երբ հաւատաս հրէշտակներու սուրբ պարտականութեան՝ պիտի վայելես անոնց հովանին պաշտպանողական: Երբ հաւատաս, թէ կարելի է թակել դուռը ողորմութեան՝ պիտի ստանաս քաւութիւն Տէրունական: Երբ հաւատաս Աստուծոյ խօսքը լսելով եւ գործադրելով՝ պիտի ըլլաս խօսուն օրինակ հնազանդութեան: Երբ հաւատաս, թէ նոր էջ բանալը առիթ է հաշտութեան՝ պիտի մշակես յարաբերութիւն առանց բարդութեան: Երբ հաւատաս, թէ Աստուծոյ հաճութիւնը շահիլը պատուէր է առաքելական՝ պիտի մերժես մեղքի մահաբեր ճամբան: Երբ հաւատաս, թէ զԱստուած օգնութեան կանչելը կարիք է անմիջական՝ աղօթքներդ կ'ըլլան շարունակական: Երբ հաւատաս Աստուծոյ խնամքին հայրական՝ օրերդ կ'ապրիս անտխրական: Երբ հաւատաս, թէ խաչով կը հասնիս յարութեան՝ պիտի տոկաս նեղութեան: Երբ հաւատաս, թէ մարդ մնալը պայքար է սրբազան՝ պիտի ըլլաս արդարութեան դեսպան: Երբ հաւատաս, թէ Բարի Նաւապետը գիտէ ուղղել կեանքի նաւակդ՝ Իրմով պիտի հասնիս նաւահանգիստ խաղաղութեան: Երբ համոզուիս, թէ հաւատքը մտքէ վեր է եւ փիլիսոփայութենէ վեհ՝ պիտի վստահիս Աստուծոյ առաջնորդութեան:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

### ԽՈՅ



Գերյոզնած կը գգաք, սակայն շաքթուն ընթացքին այդ ճնշուածութիւնը պիտի նուազի եւ պիտի հանգստանաք:

### ՑՈՒԼ



Յանգստանալու համար կը ծրագրէք ճամբորդել: Ընկերային կեանքի մէջ հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզի:

### ԵՐԿՈՒՐԵԱԿ



Արտասովոր ծրագիրներ, նոր միտքեր ունիք: Պիտի համոզէք բոլորը եւ իրականացնէք ձեր ծրագիրները:

### ԽԵՑՁԵՏԻՆ



Քննարկումներու ընթացքին կրաւորական մի՛ մնաք: Սա վատ տպաւորութիւն կը ձգէ ձեր ընկերներուն վրայ:

### ԱՌԻՇ



Միօրինակութենէ դուրս գալու մասին մտածեցէք, նախաձեռնող եղէք եւ պիտի յաջողիք:

### ԿՈՅՍ



Նոր բանակցութիւններ պիտի վարէք գործի ձեր ասպարէզին մէջ, թէեւ մեծագումար հատոյթ չ'ակընկալուի, սակայն մի՛ նահանջէք:

### ԿԵՒՈՔ



Մի՛ խուսափիք մտերիմ ընկերներու հետ ձեր ընկերային հարցերը քննարկելէ: Անվախ արտայայտուեցէք:

### ԿԱՐԻՃ



Կասկածամիտ էք, անտեղի կասկածներով կը վանէք ձեր մտերիմ ընկերները: Լատեն՝ս եղէք:

### ԱՂԵՂԱՌՐ



Տնտեսական ծանր պայմաններու մէջ պիտի յայտնուիք, սակայն անոնք ժամանակաւոր դժուարութիւններ պիտի յառաջանեն: Մի՛ վիատիք:

### ԱՅԾԵՂՁԻՐ



Թէեւ սովորաբար կազմակերպուած կ'աշխատիք, բայց այս շաբաթ պիտի դժուարանաք կարգ մը գործեր իրենց լրումին հասցնելու:

### ՋՐՅՈՍ



Ճիշդ է որ ուրիշներու կարծիքը շինիչ կրնայ ըլլալ, սակայն ձեր որոշումը թող իմանուի միայն ձեր համոզումներուն վրայ:

### ՋՈՒԿ



Մերը պիտի պարուրէ ձեր հոգին: Ձեր կողակիցը արժանի է գուրգուրանքի եւ ուշադրութեան:



## 5 ԿԱՐՃ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ՄՏՔԵՐ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

**Երբեմն կարելոր յարաբերութիւններու մասին երկար ուսումնասիրութիւններէն աւելի դիպուկ են կարճ խօսքերը: Այդ խօսքերը քանի մը տողով խորունկ իմաստ կը հաղորդեն ընթերցողին: Ահաւասիկ այդպիսի փունջ մը.**



Իմաստուն մարդու մը կը հարցնեն.  
-Ընկերներու քանի՞ տեսակ գոյութիւն ունի:  
-4 տեսակ, - կը պատասխանէ ան: - Կան ընկերներ, որոնք սնունդի պէս են. անոնք կարիքը կը գգաս ամէն օր: Կան ընկերներ, որոնք դեղի պէս են. կը փնտռեն գիրենք, երբ անտրամադիր են: Կան ընկերներ, որոնք հիւանդութեան պէս են. անոնք յաճախ քեզ կը փնտռեն, ոչ թէ հակառակը: Բայց կան նաեւ ընկերներ, որոնք օդի պէս են. անոնք անտեսանելի են, բայց միշտ քեզի հետ են:

### ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

-Ի՞նչ է «Ինծի հաճելի կը թուի» եւ «Կը սիրեմ» արտայայտութիւններուն տարբերութիւնը:  
-Եթէ ծաղիկը քեզի հաճելի կամ բուրումնաւետ թուի, կը քաղես գայն: Սակայն, եթէ կը սիրես ծաղիկը, կը գուրգուրաս, ամէն օր կը ջրես ու կը փայփայես գայն:

### ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



### ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ


Մարդ մը շատ կը հպարտանար իր գեղեցիկ մարգագետինով: Բայց օրին մէկը ան տեսաւ, որ մոլախոտեր ալ աճած են այնտեղ: Ան փորձեց ամէն ձեւով հեռացնել մոլախոտերը, սակայն՝ ապարդիւն. մոլախոտերը սկսան աւելի մեծ թափով աճիլ:



ցած բոլոր ձեւերը, իսկ նամակը աւարտեց հետեւեալ խօսքերով. «Ես փորձեցի ծանօթ բոլոր միջոցները օգտագործել, խնդրեմ ըսէք՝ ի՞նչ ընեմ»: Ան շուտով ստացաւ իր նամակին պատասխանը. «Փորձեցէք սիրել մոլախոտերը...»:

### ԻՆՉՈ՞Վ ԼԵՑՈՒՆ Է ՄԱՐԴՈՒ ՅՈԳԻՆ

Խումբ մը մարդիկ դիտմամբ բարձրաձայն կը քննադատէին մէկը, որ այդ պահուն կ'անցնէր իրենց թաղամասէն: Անցորդը ամէն ինչ լսեց, սակայն ժպտաց ու բարի օր մաղթեց այդ մարդոց: Անոնցմէ մէկը մօտեցաւ այդ մարդուն եւ հարցուց.



-Դուք կը ժպտաք ու մարդոց բարի օր կը մաղթէք, երբ անոնք կը բամբասեն ձեզ: Միթէ՞ չէք բարկանար:  
-Երբ ես շուկայ կ'երթամ, չեմ կրնար ծախսել այն, ինչ գոյութիւն չունի իմ դրամապանակին մէջ, - կ'ըսէ մարդը: - Այդպէս է նաեւ մարդոց հետ յարաբերութեան մէջ. ես կրնամ «ծախսել» միայն այն, ինչով լեցուն է հոգիս:

### ԱՆԱՆՈՒՆ

Միսաք Մեծարեւց



Վայրի՛ ծաղիկ անունդ ի՞նչ է. ըսէ՛, մասուր ու կանանչ է ցանկապատին շուքին նստած վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Ըսպիտակ կաթ ու մազտաքէ բուրո՞ղ ծաղիկ, անունդ ի՞նչ է, ըսէ՛, քի՛չ մը գէթ չէ՞ս դողար, հովիկն անոյ՞ շրթեր փըջէ...

Յպա՛րտ ծաղիկ, անունն ի՞նչ է պարիկին, որ անցաւ քովդ, հեզուկ ու սեւ սաթի վէտ վէտ ցայտք մը ձգած իր քամակէն:

Գիտե՛ս, ծա՛ղիկ, անունն ի՞նչ է դողին՝ գոր քեզ տուաւ հովիկ, ու ձայնին՝ որ գիս կը կանչէ...



Ռաֆֆի Սիկահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ Մարզական Գերագոյն Կոմիտէի նախագահ Ֆիրաս Մուալլա պաշտօնական այցելութեամբ ժամանեց Հայէայ, ուր հանդիպումներ ունեցաւ քաղաքի մարզական պատասխանատուներու եւ ակումբներու վարչակազմներուն հետ: Մուալլա այցելեց Համտանիէի մարզահամալիրը եւ մարզական ակումբները: Կոմիտէի նախագահը այցելեց նաեւ ՀՄԸՄ-ի պար-



տեղ, ուր մօտէն ծանօթացաւ ակումբի կալուածին, նաեւ ծանօթացաւ անոր դիմագրաւած դժուարութիւններուն: Ան խոստացաւ նեցուկ կանգնիլ ՀՄԸՄ-ին՝ յաղթահարելու համար բոլոր դժուարութիւնները: Մուալլա այցելեց նաեւ ՀԵԸ-ի կեդրոն եւ հանդիպում մը ունեցաւ վարչութեան հետ:


- Սուրիոյ Ֆութպոլի Դաշնութեան նախագահ Հաթէմ ալ Ղայեայ եւ դաշնութեան անդամները Կիրակի օր Հայէայ ժամանեցին եւ Համտանիէի մարզահամալիրին մէջ իրենց հերթական նիստը գումարեցին: Դաշնութեան անդամները հանդիպումներ ունեցան հալէպի ֆութպոլի պատասխանատու մարմիններուն հետ:

- ՀՄԸՄ-ի Հայէայ Մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ, սկիզբ պիտի առնեն ՀՄԸՄ-ի պասքէթի, ճատրակի եւ ֆութպոլի ամառնային դպրոցները: Վարչութիւնը յատուկ յայտարարութիւններով իրաւիբեց բոլոր քոյրերն ու եղբայրները անդամակցելու միութեան ամառնային դպրոցներուն:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌՈՍԱ ՆԻՐՔԱԿԱՆ ՀՍԿԱՅ ՎԱՍՍԵՐ ԿՐԵՑ

Իտալիոյ Ռոմա ակումբը ընթացիկ մրցաշրջանին նիւթական հսկայ վասնէր կրեց: Ըստ իտալական Football Italia-ին, Ռոմայի նիւթական կորուստները հասան շուրջ 126,4 միլիոն եւրոյի: Համեմատաբար նախորդ տարեշրջանին, այս տարի Ռոման արձանագրեց 100 միլիոնէ ավելի նիւթական վնաս: Մայրաքաղաքի ելեմուտքի անբաւարար վիճակը կապուած է պսակածե ժահրի համաճարակին հետ: Ակումբը այժմ ընդհանուր առմամբ ունի 278,5 միլիոն եւրոյի պարտք: Աւելցնենք, որ վերջերս Իտալիոյ ֆութպոլի Դաշ-



նութիւնը որոշեց մրցաշրջանը վերսկսիլ 20 Յունիսին: Իտալիոյ կառավարութիւնը ֆութպոլի ակումբներուն թելադրեց վերսկսիլ խմբային մարզումները: Պսակածե ժահրին հետեւանքով, ինչպէս բոլոր երկիրները, Իտալիան ալ դադարած համարեց երկրին մրցաշրջանը՝ մինչեւ ցնոր տնօրինում:

### ՔԱՐԱՆԻ ՆՈՐ ԽՈՒՄԲ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ

Իտալիոյ «Թօթօ Սփորթ» օրաթերթը Կիրակի օր մարզական իր լուրերուն մէջ հաղորդեց, որ Ֆրանսայի Փարիզ Սան Ժերման ակումբի յարձակողական խաղացող Էտիեննըն Քաւանիի մայրաքաղաքի խումբին հետ ստորագրած պայմանագրութեան ժամկէտը կ'աւարտի: Ըստ յայտարարուած տեղեկութիւններուն, ուրուկուեցի խաղացողը բանակցութիւններ սկսած է վարել Սպանիոյ մայրաքաղաքի Աթլէթիքօ Մատրիտ խումբին հետ, եւ մեծ հաւանականութեամբ յառաջիկայ տարեշրջանին պիտի կրէ Աթլէթիքոյի տարագր: 33-ամեայ խաղացողը, որ երկար ժամանակ է Վերմաս կը կազմէ Ֆրանսական խումբին, կ'ուզէ նոր խումբի մը հետ շարունակել իր մարզական կեանքը, տարբեր երկիրի մը մէջ: Ան նախապէս խաղացած է իտալական Փալմիրօ եւ Նափոլի խումբերուն հետ: Ըստ լուրերուն, Քաւանի Աթլէթիքոյի խումբէն տարեկան պիտի ստանայ 7 միլիոն եւրօ:




### ՍՈՒՐԵՉ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՓՈՐՁԵՐՈՒ

Սպանիոյ Պարսելոնա ակումբի յարձակողական խաղացող Լուիս Սուարեզ կազմին հետ վերսկսաւ իր փորձերը: Ան աստիճանաբար կը պատրաստուի վերադառնալու մրցումներու դաշտ: Հինգ ամիս առաջ Սուարեզ ծանրապէս վնասուեցաւ, որուն հետեւանքով ան հեռացաւ դաշտերէն եւ ենթարկուեցաւ վիրաբուժութեան: Բժիշկներու արտօնութիւնը ստանալէ ետք, ան փուլային դրութեամբ կատարեց իր փորձերը եւ այժմ ապաքինած է եւ պատրաստ մրցումներու մասնակցելու: Սուարեզ օգտուեցաւ պսակածե ժահրի համաճարակին դադարէն:



### Թիւ 11

Աարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է



<ՄԸՄ-ի ճատրակի Յնձիւ.

Երկուշաբթի 15/6



19° 32°

Երեքշաբթի 16/6



20° 34°

Չորեքշաբթի 17/6



21° 36°

Հինգշաբթի 18/6



21° 34°

Ուրբաթ 19/6



21° 35°

Շաբաթ 20/6



21° 34°

Կիրակի 21/6



21° 34°

Վատերուն մէջ լաւը գտնելը մարդկային այն յատկութիւնն է, որմէ կը ծնին նոր գաղափարներ եւ որուն միջոցաւ կեանքի խոչընդոտները կը վերածուին առիթներու: Այս սկզբունքն մեկնելով, պատերազմի



ամենէն դժնդակ տարիներուն Յալէպ ունեցաւ այն ինչ չունէր երկար տարիներ՝ մանկական երգերու մեկնաբան, յանձինս Սոնա Սիւլիւքճեան-Թերզեանին եւ իր խումբին:

Սոնա, որ կանուխ տարիքէն ցուցաբերած է երգեցողութեան արուեստի մեծ ընդունակութիւն, գարգացուցած է իր երաժշտական հակումները հետեւելով ձայնամարդութեան, իսկ 2016-էն ի վեր ամբողջովին նուիրուած է մանկական երգերու աշխարհին: «Առաջին անգամ մանուկներուն համար երգելու գա-



ղափարը ունեցայ պատերազմի շրջանին, երբ ճամբաները փակ էին եւ Յալէպի մանուկները հոգեկան ճընշուած վիճակի մէջ կը գտնուէին: Մանաւանդ երբ մանուկները կը դիտէին Յայաստան գտնուող իրենց ընկերներուն նկարները, ուշագրաւ էր, որ հոն մանուկներու աշխարհ կայ, յատուկ ձեռնարկներ ու նախաձեռնութիւններ: Ես ալ երկու գաւազնի մայր եմ եւ երբ աղջիկներս ակնածանքով ցոյց կու տային այդ նկարները, մէջք բարի նախանձ մը արթնցաւ: ՍՕ հաշի կազմակերպած Բարեկենդանի ձեռնարկի մըն էր, երբ մանուկներուն համար առաջին անգամ ըլլալով երգ եցի: Մեծ ընդունելութիւն գտաւ ելոյթս եւ սկսայ գարգացնել գաղափարը», կ'ըսէ Սոնա:

Այսօր Յալէպի գրեթէ բոլոր

## «ՍՈՆՈՅԻՆ ՏՈՒՆԸ» ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԾՐԱԳԻՐ` ՀԱԼԷՊԷՆ

դպրոցներուն ու միութիւններուն երեխաները անհամբեր կը սպասեն Սոնան եւ անոր մշտապէս ընկերակցող համաճիկը: Խամաճիկի անձայն ու խրոհողաւոր դիմակին ետեւ կանգնած է Սերլի Գուգուեան, որ իր բեմական շնորհքներով ու հնարքներով կարծ ժամանակի մէջ եղաւ Սոնային անփոխարինելի ընկերը: «Իններորդ կարգի պետական ընտրութիւնները նոր արտած էի, երբ բարեկամի մը միջոցաւ ծանօթացայ Սոնային հետ: Տեղեկացայ, որ ան



իր մանկական ելոյթին համար պարուստոյցի պէտք ունի: Առաջին հանդիպումէն իսկ համաձայնեցանք եւ անմիջապէս անցանք փորձերու: Ելոյթի բոլոր պարերը պատրաստել է ետք, երբ մօտեցաւ ներկայացման օրը, բացայայտուեցաւ որ ծաղրածուի տիպարի պէտք ունիլը: Ամիջապէս համաձայնեցայ եւ այն օրէն

ստիպուեցան երկար օրեր ու ժամեր տունը մնալ: Սոնան ու իր ընկերները չէին կրնար անտարբեր մնալ, պէտք էր հասնիլ մանուկներուն, մտնել իրենց տունները եւ թեթեւցնել առօրեային ծանրութիւնը: Այսպէս ծնունդ առաւ նոր գաղափար մը՝ «Սոնային Տունը», Ռատիօ Երագին հետ համագործակցաբար: Ծրագիրը մանկական տեսալսողական ծրագիր է, որուն միջոցաւ ամէն շաբաթ Սոնան ու իր խումբը հանդէս կու գան Ռատիօ Երագի դիմատետ-

րի էջին միջոցաւ, ներկայացնելով ճոխ յայտագիր մը, որ կ'ընդգրկէ երգեր, պարեր, գիտելիքներ, ձեռնարկներ աշխատանք ու հեքիաթներ:

«Այս ծրագիրով ունիմ երկու նպատակ, նախ՝ հասնիլ պսակաձեւ ժառիրի պատճառով տունը մնացած փոքրիկներուն: Ընկերային ցանցերուն միջոցաւ անելի դիւրին է մանուկներուն հետ հաղորդակցիլը: Անոնք այսպէս իրենք զիրենք Սոնային մօտիկ կը գան, կրնան մեկնաբանութիւններու տուփիկէն կամ սուրհանդակով (մեսենձըր) իրենց ձայնը հասցնել: Անոնց համար այլեւս Սոնան անպերուն մէջ նստած երեւակայական տիպար մը չէ, այլ հասանելի անձ մը, որ իրենց պէս



տունը նստած կը փորձէ հաղորդակցիլ աշխարհին հետ: Երկրորդ նպատակս է հասնիլ աշխարհացրիւ մանուկներուն: Յալէպի մանուկները զիս շատ լաւ կը ճանչնան ու գիտեն երգերս: Նախորդ տարիներուն, Ռատիօ Երագին ու Յամագայիկի համագործակցութեամբ կրցայ հասնիլ նաեւ Լաթաքիոյ ու Ղազախստանի մանուկներուն, սակայն կան բազմաթիւ մանուկներ, որոնց հետ կը փափաքեմ հաղորդակցիլ: Յատկա-

պէս վերջին շրջանին Յալէպէն գաղթած ծնողներ ինծի հետ կը նամակակցին, անոնց հիմնական մտահոգութիւնը իրենց գաւազներուն հայկական դպրոցներէն դուրս մնալն է, որուն պատճառով անոնք բաւարար չափով հայերէն, յատկապէս արեւմտահայերէն չեն լսել իրենց առօրեային մէջ: Իմ նպատակս է հասնիլ անոնց, հայերէն երգն ու խօսքը անոնց առօրեային անբաժան մէկ մասնիկը ընելը», հաստատեց Սոնա:

Ծրագիրը կը պահանջէ հեքիատ աշխատանք, շաբաթական դրութեամբ պատրաստելու, նկարահանելու եւ համադրելու այսպիսի հարուստ յայտագիր մը: Այս առումով Սոնան ու կանուկներու իր խումբը ոչ մէկ ճիգ կը խնայեն լաւագոյնը ներկայացնելու, հսկառակ անոր, որ բոլորն ալ բազմազան են եւ յարմար մասնագիտական փորձը չունին այսպիսի ծրագիրներ պատրաստելու: Շաբաթական դրութեամբ աշխատակազմը կը հաւաքուի, յաջորդաբար ծրագիրին յատակագիծը դնելու եւ նախապատրաստական շխատանքները կատարելու: Այլ օր մը կը տրամադրուի նկարահանութեան, իսկ երկու օրեր եւս՝ համադրումի (մոնթաժ): Սոնան ոչ միայն ծրագիրը ներկայացնողը, այլ նաեւ գայն պատրաստողն է, Սերլիի համաճիկը, պարերու եւ ձեռնարկի աշխատանքներու պատասխանատուն է, իսկ բեմադրական աշխատանքները, նկարահանումն ու համադրումը կը կատարէ Ռատիօ Երագի անձնակազմէն Յուշիկ Ղազարեան:

«Երգել շատ կը սիրեմ, բայց երբ մանուկներու համար կ'երգեմ, անելի կ'ոգեւորուիմ, մանաւանդ երբ տեսնեմ անոնց անկեղծ ոգեւորութիւնը եւ անմեղ մասնակցութիւնը», այսպէս կ'արտայայտէ Սոնա իր ամբողջ առաքելութիւնը:

Ամէն երկուշաբթի ժամը 5:00-ին մանուկներուն հետ հանդիպելու համար Սոնան ու Ռատիօ Երագի աշխատակազմը մեծ ճիգեր կը թափեն. այս առումով Սոնա կ'արտայայտէ իր երախապարտութիւնը՝

«Որքան շնորհակալ եմ բոլոր ինծի օգնողներուն, նախաձեռնութեանս առաջին օրէն իսկ գտայ դրական մօտեցումի տեր մարդիկ, որոնք թել թիկունք կանգնեցան ինծի, բայց յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ Ռատիօ Երագի անձնակազմին ու տնօրէնութեան, որոնք ամէն ճիգ կը թափեն հասցնելու հայ երգն ու երաժշտութիւնը հայ մանուկին՝ ո՛րդ ալ ըլլայ ան»:

Թողակից